

«ՈՒԵՆԵՍԱ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

*2009թ.ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

2009թ. ընթացքում «Ուենեսա» ՓԲԸ-ի ռազմավարության և գործունեության արդյունքների վրա որոշակի ազդեցություն են ունեցել ինչպես միջազգային, այնպես էլ ՀՀ ներքին շուկաներում տեղի ունեցած իրադարձությունները:

Միջազգային շուկաներում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձություններից Ընկերությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հիմնական ակնկալվող գործընկեր երկրների ֆինանսական շուկաները կանխորոշող մակրոտնտեսական ինդիկատորներին և ցուցանիշներին՝ տնտեսական աճ, գնաճ (սպառողական գների ինդեքս, համախառն ներքին արդյունքի դեֆլյատոր, աշխատավարձի ինդեքս), փոխարժեք, միջոցների ներգրավման և տեղաբաշխման միջին տոկոսադրույք, ներմուծման և արտահանման, ուղղակի և պորտֆելային ներդրումների ծավալների փոփոխությունների դինամիկա, արժեթղթերի ինդեքս, արտաքին պարտք, արտարժույթային պահուստների մակարդակ և այլն:

2009 թվականին ֆինանսական կայունության ապահովումը և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության վերականգնումը առաջնային խնդիր դարձան ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տնտեսության ներսում տեղի ունեցող տնտեսական զարգացումներին՝ նշենք Ընկերության գործունեության վրա էական ազդեցություն թողած գործոնները:

2008 թ. հոկտեմբերից սկսած, երբ գլոբալ ֆինանսական ճգնաժամն առավել խորացավ՝ հարվածելով նաև ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսություններին, ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղվածությունը կտրուկ փոխվեցին: Վերջինս, գների կայունության և տնտեսության խթանման խնդիրների արդյունավետ համադրման համատեքստում, կրում էր առավելապես ընդլայնողական բնույթ: ԿԲ կողմից դա իրականացվել է ինչպես վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցման (2009 թ. երկրորդ եռամսյակից մինչև տարվա վերջ՝ 2.75 տոկոսային կետ), այնպես էլ ծավալային առավել ակտիվ ընդլայնման միջոցով: Վերջինս ապահովելու համար դրամավարկային գործիքակազմը համալրվել է նոր, ավելի երկարաժամկետ վարկավորման գործիքներով, մասնավորապես՝ բանկերին առաջարկվել է 3-ամսյա ռեպո համաձայնագրեր:

Այսպիսով, ճգնաժամի սկզբնական փուլում գների կայունության և ֆինանսական կայունության խնդիրների արդյունավետ համադրման միջոցով հաջողվեց պատշաճ մակարդակում պահմանել ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը՝ խուսափելով բանկային համակարգում ցնցումների առաջացումից: Այնուհետև տնտեսական ակտիվության վերականգնման և գների կայունության խնդիրների համադրման ներքո իրականացվեց խիստ ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն: Այս

պայմաններում հաջողվեց առավելագույնս նպաստավոր պայմաններ ստեղծել տնտեսության վերականգնման համար՝ իհարկե գնաճը մշտապես պահպանելով կառավարելի մակարդակում:

Քանի որ Ընկերությունը կրում է ինչպես Հայաստանի Հանրապետության տնտեսության ներսում, այնպես էլ միջազգային շուկաներում կատարվող երևույթների և փոփոխությունների ազդեցությունը, այս փոփոխությունները առաջացնում են տարբեր տիպի ռիսկեր, որոնք իրենց ազդեցությունն են թողնում Ընկերության ինչպես ռազմավարական, այնպես էլ կարճաժամկետ և միջին ժամկետային ծրագրերի և դրանցից բխող գործառնությունների վրա:

Հաշվի առնելով 2009թ. սկզբին համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, Ընկերությունը վերանայեց իր ներդրումային քաղաքականությունը և որոշեց կրճատել ներդրումային պորտֆելը: Այդ փաստը էականորեն ազդեց նաև Ընկերության կողմից նախատեսված մյուս ցուցանիշների կատարողականի վրա: Սակայն քանի որ 2009 թ.-ի 2րդ կեսին նկատվեց տնտեսական ճգնաժամի ազդեցության թուլացում, Ընկերությունը՝ կանխատեսելով առաջիկայում տնտեսական աճ և աշխուժացում պետական պարտատոմսերի շուկայում, ավելացրեց ներդրումները պետական պարտատոմսերում՝ հասցնելով պորտֆելի արժեքը 3.3 մլրդ ՀՀ դրամի:

2009 թ. Ընկերությունը շարունակել է իր գործունեությունը ՀՀ ֆինանսական շուկայում, մասնավորապես, Ընկերությունն ակտիվ գործունեություն է ծավալել ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային և երրորդային շուկաներում: Ընկերության գործունեությունը մեծամասամբ կենտրոնացված է եղել պետական գանձապետական միջնաժամետ (մինչև 5 տարի մարման ժամկետ ունեցող) արժեկտրոնային պարտատոմսերով դիվերսիան գործառնությունների վրա, ինչը պայմանավորված էր այդ արժեթղթերի իրացվելիության եկամտաբերության հարաբերակցության առավել բարենպաստ լինելու հանգամանքով այլ արժեթղթերի համեմատ: Բացի այդ 2009 թվականի ընթացքում Ընկերությունը վաճառել է 2.811 մլրդ ՀՀ դրամի արժեթուղթ, որի գերակշիռ մասը կազմել են երկարաժամկետ պարտատոմսերը, որոնք բավականին մեծ ծավալ էին կազմում Ընկերության արժեթղթերի պորտֆելում: Հաշվի առնելով այն փաստը, որ պետական պարտատոմսերի կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերության նվազման արդյունքում եկամտաբերության կորը հարթվել էր, կարող ենք փաստել, որ վերոնշյալ պարտատոմսերի վաճառքի արդյունքում Ընկերության արժեթղթերի պորտֆելի կառուցվածքը բարելավվել է: Ելնելով դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունից, ինչպես նաև նոր գործիքներ օգտագործելու նկատառումներից, Ընկերությունը 2009թ. ձևավորել է շուրջ 25 մլն ՀՀ դրամ կորպորատիվ պարտատոմսերի պորտֆել, որը 2009թ.-ի վերջին նվազել է մինչև 10մլն ՀՀ դրամ, սակայն ակնկալում է ընդլայնել 2010թ.-ի ընթացքում հասցնելով շուրջ 50 մլն ՀՀ դրամի: Բացի այդ Ընկերությունը 2009թ.ի հունվարից շարունակել է մարքեթմեյքերի ծառայությունների մատուցումը կորպորատիվ պարտատոմսերի շուկայում և հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի մարքեթմեյքեր:

Բացի այդ Ընկերությունը շարունակում է իրականացնել պետական և կորպորատիվ արժեթղթերի առք ու վաճառք, ռեպո գործարքներ, արտարժույթի անկանխիկ առք ու վաճառքի և սվոպ գործարքներ: Աշխատանքներ են տարվում նախատեսված մյուս գործիքների և գործառնությունների մշակման և ներդրման ուղղությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ Ընկերությունը տիրապետում է ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաների հետ կապված ամենաթարմ տեղեկատվությանը միացված լինելով միջազգային տեղեկատվական համակարգերին և հնարավորություն ունենալով մշտապես ճշգրտելու կարճաժամկետ ծրագրերը և դրանից բխող գործողությունները, որը իր հերթին թույլ կտա հնարավորինս վերահսկելու իրականացվող գործառնությունների հետ կապված պոտենցիալ ռիսկերը և կատարելու Ընկերության առջև դրված ռազմավարական խնդիրները:

Այժմ դիտարկենք Ընկերության 2009թ. վերջի դրությամբ կարևորագույն ֆինանսական ցուցանիշները: Ընկերության ընդհանուր ակտիվները տարվա սկզբից աճել են ավելի քան 331.1%-ով և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 4 006 004 հազ. ՀՀ դրամ (համախառն ակտիվների մակարդակը 2008թ. վերջին կազմում էր 929 162 հազ. ՀՀ դրամ): Ընդհանուր ակտիվների 88,9%-ը բաժին է ընկնում Ընկերության արժեթղթերի պորտֆելին, իսկ 9.4%-ը՝ պահանջներին բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (բանկային հաշիվներին գտնվող դրամական միջոցներ և արժույթային սվոպ): Նախորդ տարվա հետ համեմատած՝ 2009թ.-ին Ընկերության արժեթղթերի պորտֆելն աճել էր ավելի քան 4.6 անգամ, ինչն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ ԿԲ կողմից ռեպո տոկոսադրույքի պարբերաբար իջեցումներով, որոնք հանգեցրեցին պորտֆելի կառավարման հետ կապված ծախսերի (ռեպո-տոկոսների) նվազեցմանը, ուստի Ընկերությունը նպատակահարմար գտավ ավելացնել արժեթղթերի իր պորտֆելը:

Ինչ վերաբերվում է պորտֆելի կառուցվածքին, ապա դրանում գերակշռում են ՀՀ պետական պարտատոմսերը, որոնց բաժինն արժեթղթերի պորտֆելում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 99.7% (շուրջ 3.552,6 մլն. դրամ): Ոչ պետական արժեթղթերի բաժինը պորտֆելում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 0.3% (շուրջ 10 մլն. դրամ):

Ընկերության ընդհանուր պարտավորությունները տարվա սկզբից աճել են 5 անգամ և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 3.526,8 մլն. ՀՀ դրամ (ընդհանուր պարտավորությունների մակարդակը 2008թ. վերջին կազմել էր 710 004 հազ. ՀՀ դրամ):

Ընդհանուր պարտավորությունների 91.2%-ը բաժին է հասնում ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցներին, որոնք 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 3.217.036 հազ. ՀՀ դրամ՝ գերազանցելով 2008թ.- ցուցանիշը (500 605 հազ. ՀՀ դրամ) շուրջ 75%-ով:

Ընկերության սեփական կապիտալը տարվա սկզբից աճել է շուրջ 118.7%-ով և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 479,213 հազ. ՀՀ դրամ (սեփական կապիտալը 2008թ.-ի վերջին կազմել էր 219,158 հազ. ՀՀ դրամ): 2009թ.-ի արդյունքներով

Ընկերությունը ստացել է 138.454,0 հազ. ՀՀ դրամի գույթ շահույթ, ինչն ավելի քան 9,1 անգամ ավել է 2008թ.-ի համապատասխան ցուցանիշից (15.294,0 հազ. ՀՀ դրամ):

2009թ.-ի ընթացքում Ընկերության կողմից հայտարարվել և վճարվել են շահութաբաժիններ՝ ընդհանուր 15,294 հազար ՀՀ դրամ գումարի չափով: Հարկ է նշել, որ Ընկերությունը 2010թ.-ի ընթացքում նախատեսում է վճարել շահութաբաժիններ մասնակիցներին 2009թ.-ի արդյունքներով առաջացած կուտակված շահույթից :

Մասնակիցները նախատեսում են ավելացնել կանոնադրական կապիտալը ևս 100,0 մլն ՀՀ դրամով :Վերջինս պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2010թ. ապրիլի 1-ից ուժի մեջ կմտնի ՀՀ ԿԲ խորհրդի 28.07.2009թ.-ի թիվ 231-Ն որաշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» Կանոնակարգ 4/02-ը՝ նոր խմբագրությամբ, համաձայն որի Ընկերության նկատմամբ կիրառվելու է ընդհանուր կապիտալի նորմատիվի նվազագույն ամենախիստ չափը, այն է՝ 300մլն. ՀՀ դրամ: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը մնացել է անփոփոխ՝ կազմելով 200,0 մլն. ՀՀ դրամ:

Ընկերության համախառն եկամուտները բաժանված են տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների. 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 213.878,3 հազ. ՀՀ դրամ, որոնցում գերակշռում են ՀՀ պետական և ոչ պետական արժեթղթերից ստացված տոկոսները (մոտ 206.929,8 հազ. ՀՀ դրամ կամ ընդհանուր տոկոսային եկամուտների 103,3%-ը): 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ տոկոսային եկամուտները կազմել են 6.948,5 հազ. ՀՀ դրամ: Ոչ տոկոսային եկամուտների 82,4%-ը բաժին է հասնում վաճառքի համար մատչելի արժեթղթերի վաճառքներից և վերաչափումից ստացված օգուտներին (179.104,0 հազ. ՀՀ դրամ), 13,7%-ը՝ արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներին (29.718,6 հազ. ՀՀ դրամ), 0,1%-ը՝ այլ գործառնություններից ստացված օգուտներին (161 հազ. ՀՀ դրամ), և 3,8%-ը՝ արտարժույթի առուվաճառքից ստացված օգուտներին (8.288,7 հազ. ՀՀ դրամ):

Ընկերության տոկոսային ծախսերը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 117.087,0 հազ. ՀՀ դրամ: Դրանց գերակշիռ մասը ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով տոկոսներն են, որոնք կազմել են 107.303,5 հազ. ՀՀ դրամ կամ տոկոսային ծախսերի 91,6 %-ը: Ընկերության տոկոսային ծախսերի 4%-ը բաժին է հասել վարկերի դիմաց վճարված տոկոսներին (4.711,0 հազ. ՀՀ դրամ), 4,2%-ը՝ փոխառությունների դիմաց վճարված տոկոսներին (4.918,4 հազ. ՀՀ դրամ), 0,2 %-ը՝ արժույթային սվոպի դիմաց վճարված տոկոսներին (154 հազ. դրամ):

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ տոկոսային ծախսերը կազմել են 175.609,8 հազ. ՀՀ դրամ: Ոչ տոկոսային ծախսերի 4,6 %-ը բաժին է հասնում անձնակազմի գծով ծախսերին (8.077,0 հազ. ՀՀ դրամ), 11,4 %-ը՝ կառավարչական ծախսերին (19.991,0 հազ. ՀՀ դրամ), 1,4%-ը՝ հասարակական կապերի գծով ծախսերին

(2.461,0 հազ. ՀՀ դրամ), 3.8%-ը՝ ամորտիզացիոն մասհանումներին (6.654,0 հազ. ՀՀ դրամ), 0,6%-ը՝ բանկային ծառայությունների ծախսերին, միջնորդավճարներին և այլ ծախսերին (1.035,8 հազ. ՀՀ դրամ): 2009թ. ընթացքում Ընկերությունն ունեցել է նաև 95.683,1 հազ. ՀՀ դրամի կորուստներ վաճառքի համար մատչելի արժեթղթերի վաճառքներից և վերաչափումից, 16.624,6 հազ. ՀՀ դրամի կորուստներ արտարժույթի վերագնահատումից և 18.191,0 հազ. ՀՀ դրամի կորուստներ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից: Ընկերության շահութահարկի գծով ծախսը կազմել է 31.340,0 հազ. ՀՀ դրամ:

Ընկերության կողմից 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացվել են շուրջ 49.1 մլրդ. ՀՀ դրամի դիվերային գործառնություններ, որոնք բաժանվել են երկու մեծ խմբերի՝ իր հաշվին և իր անունից արժեթղթերի առուվաճառքներ և ռեպո-վաճառքի գործարքներ: Այսպես, 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից կարգավորվող շուկայում և կարգավորվող շուկայից դուրս իրականացվել է 8.207,3 մլն. ՀՀ դրամի առք-վաճառք՝ այդ թվում 69.4 մլն. ՀՀ դրամի ոչ պետական արժեթղթերով, որից 36.7 մլն.-ը՝ կարգավորվող շուկայում (բացառապես կորպորատիվ պարտատոմսերով): Ռեպո-վաճառքի գործարքները կազմել են 40.896,4 մլն. ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ արժեթղթերի շուկային, ապա վերլուծելով 2006-2009 թթ. դինամիկան՝ նկատելի է պարտատոմսերի թողարկումների աճ: Ուստի, կարելի է ասել, որ ԿԲ-ի՝ արժեթղթերի շուկայի որդեգրած քաղաքականությունը տալիս է իր արդյունքները: Այդ համատեքստում կարելի է սպասել պարտատոմսերի շուկայում որոշակի ակտիվացման, որը IPO-ի շուկայի զարգացմանը նախորդող տրամաբանական քայլ է, ինչը իր հերթին բարենպաստ պայմաններ կստեղծի Ընկերության ներդրումային ծառայությունների հետագա աշխուժացման համար:

Այսպիսով, ամփոփելով նախորդ ժամանակաշրջանի կատարողականի վերլուծությունը, կարելի է նշել Ընկերության հետևյալ ուժեղ կողմերը.

- լիցենզավորված, արհեստավարժ, հմուտ և փորձառու ղեկավարություն և անձնակազմ,
- յուրաքանչյուր աշխատակցի կողմից հստակ պատկերացում Ընկերության առաքելության մասին,
- ճկունություն հաճախորդների հետ հարաբերություններում,
- գործունեության կանոնակարգվածության բարձր աստիճան,
- զարգացած տեղեկատվական և տեխնոլոգիական ենթակառուցվածք,
- բարի համբավ Հայաստանի Հանրապետության և միջազգային ֆինանսական շուկաներում:

Պետք է նշել, որ տարին եղել է Ընկերության ներքին կազմակերպական աշխատանքների, կանոնակարգման կատարելագործման, մատուցվող ծառայությունների և պրոդուկտների զարգացման ու տեսականու ընդլայնման տարի:

Ընկերության թույլ կողմերին թերևս կարելի է դասել հաճախորդների ձևավորված բազայի սակավությունը, որի պատճառներից մեկը որոշ ծառայությունների մատուցման

հետ կապված բնակչության անվտանգությունն է և ոչ տեղեկացված լինելը: Ինչպես նաև ֆինանսական ճգնաժամի անմիջական ազդեցությունը ամբողջ աշխարհի վրա:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Ընկերությունը գտնվում է շուկայում իր դիրքերի ամրապնդման և զարգացման փուլում, և նրա թույլ և ուժեղ կողմերը ավելի արտահայտիչ կդառնան ժամանակի ընթացքում:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Վաղինակ Սարոյան

Նարիա Մարգարյան